Գործ թիվ ԵԴ2/22499/02/23

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայցադիմումը վարույթ ընդունելու և ապացույցներ պահանջելու մասին

18 օգոստոսի 2023թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Բաղիրյանս, քննության առնելով ըստ հայցի «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ պատասխանող Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության՝ գնահատող հանձնաժողովի 17.07.2023թ. արձանագրության 1.1 կետով «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պայմանագիր կնքելուց զրկելու և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, ինչպես նաև «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի 27.07.2023թ. թիվ 67 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին հայցադիմումը վարույթ ընդունելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ պատասխանող Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության՝ խնդրելով

1. անվավեր ճանաչել ՀՀ ՊՆ-ՓՄԱՊՁԲ-21/44,60-ՀՀ ՊՆ-ՓՊՄԱՊՁԲ-23-7/48 գնահատող հանձնաժողովի 17.07.2023թ. արձանագրության 1.1 կետով «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պայմանագիր կնքելուց զրկելու և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը,
2. անվավեր ճանաչել «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու

Scanned with CamScanner

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակու ներառելու մասին ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի 27.07.2023թ. թիվ 67 որոշումը:

Հայցադիմումը 08.08.2023 թվականին մակագրվել է դատավոր Ա. Բաղիրյանին, դատավորին է հանձնվել 09.08.2023 թվականին:

Սույն հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-3-րդ կետերի համաձայն՝

1. դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

2. Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Դատարանը գտնում է, որ պատասխանողից անհրաժեշտ է ՀՀ ՊՆ-ՓՄԱՊՁԲ-21/44,60-ՀՀ ՊՆ-ՓՊՄԱՊՁԲ-23-7/48 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված՝ պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ինչպես նաև սույն գործն անհրաժեշտ է քննել դատական նիստում:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ, 200-րդ, 234.6-րդ և 234.9-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն ընդդեմ պատասխանող Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության՝ գնահատող հանձնաժողովի 17.07.2023թ. արձանագրության 1.1 կետով «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պայմանագիր կնքելուց զրկելու և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, ինչպես նաև «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

Scanned with CamScanner

ցուցակում ներառելու մասին ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի 27.07.2023թ. թիվ 67 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Պատասխանող Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանց պահանջել ՀՀ ՊՆ-ՓՄԱՊՁԲ-21/44,60-ՀՀ ՊՆ-ՓՊՄԱՊՁԲ-23-7/48 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված՝ պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Սույն որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, ենթակա է կատարման պատասխանողի կողմից այն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

3. ԵԴ թիվ 2/22499/02/23 քաղաքացիական գործով դատական նիստ նշանակել 2023 թվականի հոկտեմբերի 11-ին, ժամը 12:30-ին, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Արաբկիրի նստավայրում /հասցե՝ Հր. Ներսիսյան 10/:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ԲԱԴԻՐՅԱՆ**

Scanned with CamScanner